

**ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ**  
**ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ**  
**ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ**

Մայիս 13-15  
Նիւ Եորք

**Ա. ՆԻՍ**  
Հինգշաբթի, 13 Մայիս, 2010

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի բացումը կատարուեցաւ Հինգշաբթի, Մայիս 13, 2010-ի առաւօտեան ժամը 11:30-ին, Նիւ Եորք քաղաքի Crowne Plaza հիւրանոցին մէջ, նախագահութեամբ թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Բարձրաշնորհ Տ. Օշական Ս. Արք. Զօրայեանի, եւ հիւրընկալութեամբ քաղաքի Սուրբ Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ եւ Տակլըսքընի, (Նիւ Եորք) Ս. Սարգիս Հայց. Առաքելական եկեղեցւոյ: Ժողովը իր աշխատանքներուն սկսաւ Առաջնորդ Սրբազան Հօր աղօթքով:

Առաջին նիստին ներկայ էին 50 հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորներ:

Ներկաներու ստուգումէն ետք, Առաջնորդ Սրբազան Հօր հրաւերով ժամանակաւոր դիւանի ատենապետութիւնը ստանձնեց պրն. Ճէֆ Մարտոյեան, իսկ քարտուղարի պաշտօնը՝ Արթ. Տ. Զարեհ Աւ. Քհնյ. Սահակեան:

Ազգային Վարչութեան Ատենապետ՝ Յակոբ Խաչատուրեան ներկայացուց լիազօրագրերու մասին Ազգային Վարչութեան գեկոյցը, որմէ պարզուեցաւ թէ Ռիմֆիլտ՝ Նիւ Ճըրզիի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ եւ, Տիրպորն՝ Միշիկընի Ս. Սարգիս եկեղեցւոյ համայնքները թերացած են Ազգային Առաջնորդարանի տուրքը «Բօթա»-ն վճարելու իրենց նիւթական պարտաւորութեանց մէջ: Ազգային Վարչութեան անունով Պրն. Խաչատուրեան ժողովին ներկայացուց հետեւեալ առաջարկը՝ «Ազգային Վարչութիւնը կ'առաջարկէ ձայնի եւ ֆուէի իրաւունքէ զրկել Սրբոց Վարդանանց եւ Ս. Սարգիս եկեղեցիներու պատգամաւորները»: Ժողովի ատենապետը հրաւիրեց ժողովականները որպէսզի քննարկեն Ազգային Վարչութեան ներկայացուցած առաջարկը: Յետ կարծիքներու փոխանակման, որոշուեցաւ որ Ազգային Վարչութիւնը բարեփոխէ իր ներկայացուցած առաջարկը: Ազգային Վարչութիւնը ներկայացուց բարեփոխուած հետեւեալ առաջարկը. «Ազգային Վարչութիւնը կ'առաջարկէ ձայնի իրաւունք շնորհել Սրբոց Վարդանանց եւ Ս. Սարգիս եկեղեցիներու պատգամաւորներուն, եւ սակայն զրկել զանոնք ֆուէի իրաւունքէն»: Բարեփոխուած առաջարկը ֆուէարկութեան դրուեցաւ իւրաքանչիւր եկեղեցւոյ համար առանձնաբար, եւ տուաւ հետեւեալ արդիւնքները.---

Տիրպորն, Միշիկընի Ս. Սարգիս եկեղեցւոյ պարագային՝ 26 թեր, 18 դէմ եւ 6 ձեռնպահ:

Ռիմֆիլտ, Նիւ Ճըրզիի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ պարագային՝ 47 թեր, 2 դէմ եւ 1 ձեռնպահ:

**ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ**

Ընտրողական Յանձնախումբի համար առաջարկուեցան հետևելի 10 անունները՝ Արժ. Տ. Անդրանիկ Ա. Քհնյ. Պալինեան, Արժ. Տ. Մեսրոպ Քհնյ. Լաֆիսեան, Յակոբ Սոլաֆեան, Արա Նալպանտեան, Ժան Ճէրիֆեան, Վարուժան Ճինտոյեան, Տֆթ. Անտրէ Մարգարեան, Տֆթ. Արա Չալեան, Ժան Պուչաֆեան եւ Տֆթ. Արթըր Քուպիֆեան:

Տեղի ունեցաւ գաղտնի քուէարկութիւն, որմէ ետք բարի գալստեան խօսք արտասանեցին հիւրընկալ եկեղեցիներուն հոգեւոր հովիւները՝ Արժ. Տ. Նարեկ Քհնյ. Թրթոնեան, հոգեւոր հովիւ Տակլըսքընի Ս. Սարգիս եկեղեցւոյ, եւ Արժ. Տ. Մեսրոպ Քհնյ. Լաֆիսեան, հոգեւոր հովիւ Նիւ Նորֆի Ս. Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ: Բարի գալստեան խօսք արտասանեց նաեւ Տֆթ. Արամ Գազազեան՝ Ատենապետ Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգաբարձութեան, որմէ ետք յայտարարուեցաւ ճաշի դադար:

Ճաշէն ետք շարունակուեցաւ նիստը եւ յայտարարուեցաւ Ընտրողական Յանձնախումբի ընտրութեան արդիւնքները.

Արժ. Տ. Անդրանիկ Ա. Քհնյ. Պալինեան	44 քուէ
Արժ. Տ. Մեսրոպ Քհնյ. Լաֆիսեան	37 քուէ
Յակոբ Սոլաֆեան	29 քուէ
Արա Նալպանտեան	18 քուէ
Ժան Ճէրիֆեան	23 քուէ
Վարուժան Ճինտոյեան	31 քուէ
Անտրէ Մարգարեան	26 քուէ
Արա Չալեան	27 քուէ
Ժան Պուչաֆեան	16 քուէ
Տֆթ. Արթըր Քուպիֆեան	8 քուէ

Ընտրուած յայտարարուեցան Արժ. Տ. Անդրանիկ Ա. Քհնյ. Պալինեան, Արժ. Տ. Մեսրոպ Քհնյ. Լաֆիսեան, Յակոբ Սոլաֆեան, Վարուժան Ճինտոյեան եւ Տֆթ. Արա Չալեան:

Ատենապետ Մարտոյեան ներկայացուց օրուան պատուոյ հիւրը՝ Ամերիկայի Արեւելեան (Էջմիածնական) թեմի դիտորդ՝ Տֆթ. Ռաֆֆի Յովհաննէսեանը եւ զայն հրաւիրեց ուղղելու իր ողջոյնի խօսքը: Տֆթ. Յովհաննէսեան իր արտասանած խօսքին մէջ, թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր ու թեմիս պատկառելի ժողովին փոխանցեց Էջմիածնական թեմի Առաջնորդ՝ Բարձրաշնորհ Տ. Խաժակ Ա. Արք. Պարսամեանի սիրալիր ողջոյններն ու յաջողութեան բարեմաղթութիւնները: Իր կարգին, Տֆթ. Յովհաննէսեան յաջողութիւն մաղթեց Ազգային Երեսփոխանական Ժողովիս աշխատանքներուն: Ապա Ատենապետ Մարտոյեան ներկայացուց թեմիս կրտսերագոյն եկեղեցականը՝ Արժ. Տ. Գարեգին Քհնյ. Պետրեանը, որ 2009-ին ձեռնադրուելէ ետք, Հոկտեմբեր ամսուն ժամանած էր Միացեալ Նահանգներ: Արժ. Տէր Հայրը խօսք առնելով իր ուրախութիւնը յայտնեց որ առաջին անգամ ըլլալով ներկայ կը գտնուի Ազգային Երեսփոխանական Ժողովին եւ յաջողութիւն մաղթեց ժողովականներուն:

Ազգային վարչութեան ատենապետ՝ Յակոբ Խաչատրեան քացատրութիւններ տուաւ կրօնական եւ հայեցի դաստիարակութեան, հաշուեմնութեան եւ պիւտնէի, կանոնագրութեան, թեֆնոլոնիի եւ հոգաբարձութեանց ատենապետներու յանձնախումբերու հանդիպումներուն մասին:

### ՄՆԱՅՈՒՆ ԴԻԻԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Մնայուն դիւանի ընտրութեան համար Ընտրողական Յանձնախումբի կողմէ ներկայացուեցաւ թեկնածուներու կրկնակի ցանկ: Ատենապետութեան համար՝ Ստեփան Յակոբեան, Ժան Ճէրիֆեան, Ճէֆ Մարտոյեան եւ Ռուբէն Սուրէնեան: Իսկ քարտուղարի պաշտօնին համար՝ Ժանէթ Հարոյեան եւ Տֆֆ . Անտրէ Մարգարեան (անգլերէն), Արժ. Տ . Զարեհ Ա. Քհնյ. Սահակեան եւ Արժ. Տ . Կոմիտաս Քհնյ. Պաղսարեան (հայերէն): Մնայուն դիւանի ընտրութիւնը տեղի ունեցաւ գաղտնի ֆուէարկութեամբ:

Ազգային վարչութեան ատենապետ՝ Յակոբ Խաչատրեան գեկուցեց Ազգային Առաջնորդարանիս կողմէ Հայաստանի մէջ հաստատուած «Մեծն Ներսէս» բարեսիրական կազմակերպութեան մասին: Ան նաեւ անդրադարձաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ Արցախի մէջ «Նոր Կիլիկիա» գիւղի կառուցման եռամեայ ծրագրին մասին, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերը:

Ընտրողական Յանձնախումբի անդամ՝ պրն. Յակոբ Սուլաֆեան, ներկայացուց մնայուն դիւանի ընտրութեան արդիւնքները.

### Ատենապետի պաշտօն՝

Ստեփան Յակոբեան	45 ֆուէ
Ժան Ճէրիֆեան	10 ֆուէ
Ճէֆ Մարտոյեան	39 ֆուէ
Ռուբէն Սուրէնեան	8 ֆուէ

### Ընտրուած՝ Ստեփան Յակոբեան եւ Ճէֆ Մարտոյեան

### Քարտուղարութեան պաշտօն՝ (անգլերէն)

Ժանէթ Հարոյեան	38 ֆուէ
Տֆֆ . Անտրէ Մարգարեան	13 ֆուէ

### Ընտրուած՝ Ժանէթ Հարոյեան

Քարտուղարութեան պաշտօն՝ (հայերէն)

Արժ. Տ. Զարեհ Ա. Քհնյ. Սահակեան 33 Բուէ

Արժ. Տ. Կոմիտաս Քհնյ. Պաղսարեան 17 Բուէ

Ընտրուած՝ Տ. Զարեհ Ա. Քհնյ. Սահակեան

## Բ. ՆԻՍ

Հինգշաբթի, 13 Մայիս, 2010

Ազգային Երեսփոխանական Ժողովի Բ. նիստը բացուած յայտարարուեցաւ կէսօրէ ետք ժամը 2:00-ին: Ներկաներու ստուգումէն ետք կարդացուեցաւ եւ վաւերացուեցաւ Ա. Նիստի հայերէն ատենագրութիւնը: Ապա, մեծ պաստառի վրայ ներկայացուեցաւ, վիտէօ արձանագրութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հայրապետական պատգամը ուղղուած Ազգ. Երեսփոխանական Ժողովիս: Իր պատգամին մէջ Վեհափառը կոչ կ'ուղղէր ժողովականներուն Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ միասնաբար գործել ու ծառայել ի պայծառութիւն մեր Թեմին եւ Հայց. Առաքելական Սուրբ եկեղեցւոյ:

Այնուհետեւ ժողովի Ատենապետ Ճէֆ Մարտոյեան հրաւիրեց Թեմիս Բարեխնամ Առաջնորդը որպէսզի փոխանցէ իր հայրական պատգամը: Սրբազան Հայրը իր պատգամին մէջ շեշտը դրաւ «հաւատք եւ ծառայութիւն» գաղափարին վրայ:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒՆ

Թեմիս Կրօնական Ժողովի ատենադպիր՝ Արժ. Տ. Նարեկ Քհնյ. Թրթռեան համառօտ կերպով եւ power point-ի միջոցով ներկայացուց Կրօնական Ժողովի տեղեկագիրը, (անգլերէն): Ապա Ազգային Վարչութեան ատենապետ՝ Յակոբ Խաչատուրեան համառօտ կերպով եւ նոյնպէս power point-ի միջոցով ներկայացուց Ազգային Վարչական Ժողովի տեղեկագիրը:

Ժողովին ատենապետը յայտարարեց որ երկու տեղեկագիրներու մասին հարցումները պէտք է կատարուին գրաւոր կերպով ու յանձնուին Ազգային Վարչութեան ատենապետին:

Ատենապետ Մարտոյեան նաեւ կատարեց հետեւեալ յայտարարութիւնները.

1- Ազգային Վարչութիւնը այս գիշեր պիտի գումարէ առանձին նիստ մը քննարկելու համար տեղեկագիրներուն մասին ներկայացուած գրաւոր հարցումները:

2- Ուրբաթ գիշերուան ճաշկերոյթի տոմսերը կարելի է ապահովել սրահի մուտքին:

3- Նուպար Մկրեան եւ Զօհրապ Թագեան կոչ կ'ուղղեն երեսփոխաններուն Առաջնորդարանի վիճակահանութեան տոմսերը կարելի եղած չափով արագ սպառելու:

4- Ազգային Երեսփոխանական Ժողովի խմբակարար պիտի առնուի այս երեկոյեան, Ս. Սարգիս եկեղեցւոյ մուտքին, նախքան Ս. պատարագի մատուցումը:

5- Ատենապետ Մարտոյեան երեք պատգամաւորներ նշանակեց, իմրագրելու ժողովին կողմէ յղուելիք պաշտօնական նամակները՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Նախագահ Պարաֆ Օպամային, Նիւ Եորքի Նահանգի Նահանգապետ Տէյվիտ Բիթըրսընին եւ Նիւ Եորքի քաղաքապետ Մայքլ Պլումպրըկին:

6- Օթոպիւսերը ժամը 5:30-ին պիտի մեկնին դէպի Ս. Սարգիս եկեղեցի:

Ազգային Երեսփոխանական ժողովի Բ. նիստը աւարտեցաւ երեկոյեան ժամերգութեամբ: Այնուհետեւ ներկաները մեկնեցան Տակըսթըն, Նիւ Եորքի Ս. Սարգիս եկեղեցի, ներկայ գտնուելու Համբարձման տօնին առիթով մատուցուելիք Սուրբ Պատարագին, որ մատուցեց Արժ. Տ. Յովնան Քենյ. Պօգոյեան: Յաւարտ Ս. Պատարագին եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր, մասնակցութեամբ Ս. Լուսաւորիչ Ամենօրեայ վարժարանի աշակերտութեան եւ Ս. Սարգիս եկեղեցւոյ «Երագ» պարախումբին: Ապա ընթրիք հիւրասիրուեցաւ:

## Գ. ՆԻՍ

Ուրբաթ, 14 Մայիս, 2010

Ժողովս իր աշխատանքներուն սկսաւ առաւօտեան ժամը 8:52-ին: Ժողովը վարեց ատենապետ Ստեփան Յակոբեան, իսկ ներկաներու ստուգումը կատարեց Զարեհ Ա. Քենյ. Սահակեան: Ներկայ էին 56 երեսփոխաններ:

Մոնա Անտրիֆեան՝ Առաջին փոխ-Նախագահ Investments with UBS-ի, ներկայացուց բարեսիրական նուիրատութիւններ կատարելու մշակուած ծրագիր մը:

Այնուհետեւ Զարեհ Քենյ. կարդաց Բ. Նիստի ատենագրութեան առաջին մասը, իսկ երկրորդ մասը՝ ձանձք Հարոյեան:

### ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կրօնական ժողովին ներկայացուցած Տարեկան Տեղեկագրին մէջ եղան կարգ մը նշդումներ:

Ազգային Վարչութեան ներկայացուցած Տարեկան Տեղեկագրի մասին եղած հարցումները լուսաբանուեցան Ազգային Վարչութեան ատենապետին կողմէ (մանրամասնութիւնները տեսնել անգլերէն ատենագրութեան մէջ):

Նարդուհի Սելվէրեան խնդրեց, որ Հայիթի երկրաշարժէն ետք հանգանակուած նուիրատութիւններու առիթով Ամերիկեան Կարմիր Խաչի կողմէ ստացուած նամակի պատճենները դրկուին այդ հանգանակութեան մասնակցած եկեղեցիներուն եւ կազմակերպութիւններուն: Ուաշինկթընի Ս. Խաչ եկեղեցւոյ երեսփոխաններէն մին յայտնեց թէ ինք ժամանակին չէ ստացած Ազգային Երեսփոխանական ժողովի ծրարը, եւ հետեւաբար առիթ չէ ունեցած զայն ուսումնասիրելու:

Առաջարկուեցաւ եւ երկրորդուեցաւ վաւերացնելու Ազգային Վարչութեան Տարեկան Տեղեկագիրը: Զեռնբարձ կատարուած քուէարկութիւնը պարզեց հետեւեալ պատկերը՝ 54 թեր եւ 2 ձեռնպահ:

Օշական Սրբազան դիտել տուաւ, որ եղած գնահատականները պէտք է առանձնաբար անդրադառնան Կրօնական Ժողովի ու Ազգային Վարչութեան գործունէութեան: Առաջարկուեցաւ եւ միաձայնութեամբ գնահատանքի արժանացաւ Կրօնական Ժողովի անցնող տարուան գործունէութիւնը:

Առաջարկուեցաւ շնորհաւորել Ազգային Վարչութեան տարած գովասանքի արժանի աշխատանքը: Առաջարկը երկրորդուեցաւ, եւ քուէարկութեան դրուեցաւ: 54 թեր եւ 2 ձեռնպահ:

Առաջարկուեցաւ եւ երկրորդուեցաւ վաւերացնել Ա. եւ Բ. նիստերու ատենագրութիւնները: Առաջարկը միաձայնութեամբ ընդունուեցաւ:

### ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՇԷՆՔԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ

Ազգային Վարչութեան անդամ Ճան Տաղլեան ներկայացուց Ազգային Առաջնորդարանի շէնքի նորոգութեան ծրագիրը: Ներկայացման իր մասնակցութիւնը բերաւ Նիւ Եորքէն ծանօթ երկրաչափ Էտ Մկրտիչեան, որ կամաւոր աշխատանքով մասնագիտական ֆննութեան ենթարկած է առաջնորդարանի շէնքի կառոյցը: Ազգային Վարչութիւնը ներկայացուց երեք տարբերակներ: 1) Ծախել ներկայ շէնքը եւ այլ շէնք մը գնել: 2) Վերանորոգել ներկայ շէնքը, որուն համար կը նախատեսուի 3.7 միլիոն տոլարի ծախս, եւ կամ 3) քանդել ներկայ շէնքը եւ նորը բարձրացնել, որու համար կը նախատեսուի 4.6 միլիոն տոլարի ծախս: Թիւ 2 եւ 3 տարբերակներու պարագային, առաջնորդարանի գրասենեակները ժամանակաւորապէս այլ վայր փոխադրելու ժամկէտը նկատի առնուած է նուազագոյնը 12 ամիս, իսկ ծախսը՝ 200,000 տոլար:

Ազգային Վարչութիւնը հետեւեալը առաջարկեց Ազգային Երեսփոխանական Ժողովին: «Իրաւասութիւն տալ Թեմիս Ազգային Վարչութեան 5 միլիոն տոլար տրամադրելու Ազգ. Առաջնորդարանը նոր շէնքով մը օժտուելու ծրագրին, ի հարկէ վերոնշեալ տարբերակները ի մտի ունենալով: Այդ ուղղութեամբ ոչինչ նախանձեռնել նախքան հանգանակութեանց միջոցով ապահովել այդ գումարին կէսը»:

Կը նախատեսուի 2 միլիոն տոլար գոյացնել հանգանակութեանէն, 2 միլիոն տոլարի փոխատուութիւն ապահովել, մնացեալ գումարը ապահովել դրամատունէն, որպէս փոխատուութիւն Ազգային Առաջնորդարանի հիմնադրամներէն:

Լուրջ ֆննարկումի ընթացքին ներկայացուեցաւ զանազան գաղափարներ, որոնցմէ գլխաւորը՝ առաջնորդարանի շէնքի փոխադրութիւնը Նիւ Եորք քաղաքի Մանհէթըն շրջանէն այլ շրջան մը (Այլ մանրամասնութիւնները տեսնել անգլերէն բաժնին մէջ): Ընդարձակ ֆննարկումներէ ետք առաջարկուեցաւ եւ երկրորդուեցաւ հետեւեալ բանաձեւը.. «Իրագործել Ազգային Վարչութիւնը հետապնդելու Առաջնորդարանի շէնքը եւ տեղը նորը կառուցելու տարբերակը եթէ հնարաւոր չըլլայ այլ շէնք մը գտնել, եւ վերջնական ծրագիր մը ներկայացնել 2011-ի Ազգային Երեսփոխանական Ժողովին: Առաջարկը գաղտնի քուէարկութեամբ, 47 թեր, 0 դէմ եւ 2 ձեռնպահ քուէներով ընդունուեցաւ:

Յայտարարուեցաւ յանձնախումբերու կայացնելիք ֆննարկումներու ժողովասրահները, կոչ ուղղելով յանձնախումբերուն իրապաշտ եւ գործնական առաջարկներ ներկայացնելու ժողովիս:

Ատենապետ Ստեփան Յակոբեան ներկայացուց Արեւելեան Ամերիկայի ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Ճոյս Երեմեանը, Առաջնորդարանի Տիկնանց Միութեան կողմէ Ճէմա Վարդանեանը, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետուհի Լալիկ Վարդանեանը: Ճաշի դադարէն ետք, կ.ե. ժամը 1:30 յանձնախումբերը սկսան իրենց աշխատանքներուն:

Նոյն օրը երեկոյեան 4:30-ին, ժողովս իր աշխատանքներուն վերսկսաւ, ուր առաջին հերթին Քրիստոնէական Դաստիարակութեան Յանձնախումբի զեկոյցը ներկայացուց ԲԺ. Անտրէ Մարգարեան: Յակոբ Սոլաքեան ներկայացուց Հայեցի Դաստիարակութեան զեկոյցը: Իսկ իրաւարան ժան Պուչաֆլեան ներկայացուց Կանոնագրութեան յանձնախումբի զեկոյցը: (Մանրամասնութիւնները տեսնել անգլերէն բաժնին մէջ)

Նիստը իր աւարտին հասաւ ժամը 6:45-ին, երեկոյեան արարողութեամբ:

## Դ. ՆԻՍ

Շաբաթ, 15 Մայիս, 2010

Ազգային Երեսփոխանական ժողովի Դ. նիստը բացուած յայտարարուեցաւ Ատենապետ Ստեփան Յակոբեանի կողմէ Շաբաթ առաւօտեան ժամը 9:35-ին, Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ ներքնասրահին մէջ: Տեղի ունեցաւ առաւօտեան ժամերգութիւն: Ներկաներու ստուգումը կատարեց Զարեհ Ա. Գ. հնյ. Սահակեան: Բարեփոխուած օրակարգը հետեւեալն էր՝ Կանոնագրութեան եւ Կրօնական Դաստիարակութեան Յանձնախումբերու զեկոյցներու քննարկման շարունակութիւն եւ վաւերացում: Ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի, նախորդ նիստի ատենագրութեան ընթերցում եւ պետական անձնաւորութիւններու յղուելիք նամակներու բովանդակութեան քննարկում (Վերոնշեալ Կանոնագրութեան եւ Կրօնական Դաստիարակութեան յանձնախումբերու զեկոյցներու քննարկումը եւ այլ մանրամասնութիւնները տեսնել անգլերէն ատենագրութեան մէջ):

Ազգային Վարչութեան անդամ՝ Տէր. Ռաֆֆի Մաննիկեան ներկայացուց Թեմային Յանձնախումբի տեղեկագիրը (Մանրամասնութիւնները տեսնել անգլերէն ատենագրութեան մէջ):

Ազգային Վարչութեան գանձապահ Ռաֆֆի Ուրլեան ներկայացուց հաշուեքննութեան եւ պիւտնէի յանձնախումբի տեղեկագիրը (Մանրամասնութիւնները տեսնել անգլերէն ատենագրութեան մէջ):

Գ. նիստի ատենագրութիւնը կարդացուեցաւ եւ ապա վաւերացուեցաւ:

Գաղտնի ֆուէարկութեամբ տեղի ունեցաւ թեմի Հաշուեքննիչ Յանձնախումբի ընտրութիւն, ինչպէս նաեւ Կրօնական ժողովի եւ Ազգային Վարչութեան լրացուցիչ ընտրութիւններ:

## ԶՆԱԽԱՏԵՍՈՒԱԾ ՀԱՐՑԵՐ

Զնախատեսուած հարցերու ծիրէն ներս եղան քանի մը հարցումներ, որոնց տրուեցան գոհացուցիչ պատասխաններ:

Տ. Արամ Ա. Քհնյ. Ստեփանեան կարդաց Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին յղուելիք նամակը: Այս կարդացուեցաւ ու վաւերացուեցաւ Նիւ Եորք նահանգի նահանգապետ՝ Տէյվիտ Փաթըրսընին եւ Նիւ Եորք քաղաքի քաղաքապետ՝ Մայքըլ Պլումպըրկին յղուելիք նամակները: Իսկ ԱՄՆի նախագահին յղուելիք նամակը պարտականութիւն տրուեցաւ Ազգային Վարչութեան: Քաղաքական դէմքերու նամակները խմբագրեց դատաւոր Հայկանոյշ Պետրոսեան:

Ատեմապետ Ճէֆ Մարտոյեան ողջունեց ներկայութիւնը թ' եմիս արտահաս հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Մուշեղ Ա. Քհնյ. Գալուստեանին:

Ան նաեւ ներկայացուց իրենց քառամեայ առաջին եւ երկրորդ շրջանները աւարտած երեսփոխանները: Առաջին քառամեայ իրենց շրջանը աւարտեցին՝ Զարլոգ Քէօմիլրեան, Աւետիս Պարոնեան, Վիրժինիա Անթոնեան, Տֆթ. Արամ Քազազեան եւ Դաւիթ Պուռնազեան: Երկրորդ քառամեայ իրենց շրջանը աւարտեցին՝ Ճան Տաղլեան, Ռուբէն Սուրէնեան, Աւետիս Մովսէսեան եւ Պետրոս Երուանդ Սարգիսեան:

## ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԱՐԴԻԻՆՔՆԵՐ

Ընտրողական Յանձնախումբը ներկայացուց կատարուած ընտրութիւններու արդիւնքները.--

### Հաշուեքննիչ Յանձնախումբ

Աւետիս Մովսէսեան, վերընտրելի	49 քուէ
Ստեփան Ստեփանեան, վերընտրելի	47 քուէ
Պետրոս Եսայեան	12 քուէ
Ռիչըրտ Սէլվէրեան	32 քուէ
Ճէյմս Պէլլ	11 քուէ
Տֆթ. Արթըր Քուպիֆեան	11 քուէ

Ընտրուած պարոնայք՝ Աւետիս Մովսէսեան, Ստեփան Ստեփանեան եւ Ռիչըրտ Սելվէրեան, իսկ Պետրոս Եսայեան՝ անձնափոխանորդ:

Առաջարկուեցաւ ձեռնարած ընտրութիւն կատարել երկրորդ անձնափոխանորդի համար, որ տուաւ հետեւեալ պատկերը.-- Ճէյմս Պէլլ՝ 33 քուէ, Արթըր Քուպիֆեան՝ 9 եւ 3 ձեռնպահ: Ընտրուած՝ Ճէյմս Պէլլ:

**Կրօնական ժողով**

Տ. Նարեկ Քենյ. Թրթռեան	43 ֆուէ
Տ. Յովնան Քենյ. Պոգոյեան	8 ֆուէ

**Ազգային Վարչութիւն**

Քանոն ճեհանեան	1 ֆուէ
Զօհրապ Թագեան	36 ֆուէ
Ռաֆֆի Ուրլեան	53 ֆուէ
Յովսէփ Աբգարեան	1 ֆուէ
Յակոբ Անդրանիկեան	37 ֆուէ
Վարուժան Ճինտոյեան	19 ֆուէ
Ժան Ճէրիֆեան	8 ֆուէ
Ստեփան Յակոբեան	51 ֆուէ
Արա Նալպանտեան	16 ֆուէ
Զարեհ Սողոմոնեան	43 ֆուէ

Ընտրուած՝ Կրօնական ժողով, Տ. Նարեկ Քենյ. Թրթռեան: Ազգային Վարչութիւն, Զօհրապ Թագեան, Ռաֆֆի Ուրլեան, Յակոբ Անդրանիկեան, Ստեփան Յակոբեան եւ Զարեհ Սողոմոնեան:

**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ**

Նկատի ունենալով, որ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Բարձրաշնորհ Տ. Օշական Ա. Արք. Զօլոյեանի պաշտօնավարութեան երրորդ ֆառամեայ շրջանը իր աւարտին հասած էր, թեմիս Ազգային Վարչութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառէն խնդրած էր առաջնորդական թեկնածուներու ցանկ մը, որ ներկայացուեցաւ Երեսփոխանական ժողովին: Տ. Անդրանիկ Ա. Քենյ. Պալեան, բացի Օշական Արքագանէն, ներկայացուց երկու թեկնածուներու կենսագրութիւնները: Անոնք էին՝ Գերաշնորհ Տ. Նորայր Եպս. Աշրգեան եւ Գերապատիւ Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Մաննիկեան:

Տեղի ունեցաւ գաղտնի ֆուէարկութիւն.

Բարձրաշնորհ Տ. Օշական Արք. Զօլոյեան	51 ֆուէ
Գերաշնորհ Տ. Նորայր Եպս. Աշրգեան	1 ֆուէ
Գերապատիւ Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Մաննիկեան	1 ֆուէ

Ընտրութեան արդիւնքը յայտարարուելէն անմիջապէս ետք, առաջարկուեցաւ միաձայնութեամբ վերընտրուած յայտարարել Բարձրաշնորհ Տ. Օշական Արք. Զօլոյեանը՝ չորրորդ ֆառամեայ շրջանի մը համար: Առաջարկը ընդունուեցաւ, որմէ ետք, ժողովին

ներկայ գտնուող հոգեւորականները վերընտիր Առաջնորդ Սրբազան Հայրը առաջնորդեցին ժողովասրահ, ներկաներու բուռն ծափահարութիւններու ներքեւ:

Իր անձին հանդէպ ցոյց տրուած վստահութիւնը բարձր գնահատելով, Սրբազան Հայրը ըսաւ. – «Ձեմ գիտեր ինչո՞ւ առաջին անգամ ըլլալով աւելի ծանր ըլլալ կը թուի իմ ուսերուս վրայ դրուած աշխատանքը: Իմ պաշտօնի ստանձնումիս առաջին օրէն իսկ փորձեցի պատրաստել երիտասարդ եւ նուիրեալ եկեղեցականներ ծառայելու մեր թեմին: Երկրորդ, որպէս դեսպանները մեր առաջնորդարանին, ուր որ ալ գտնուիք, սկսեալ ձեր համայնքներէն, պէտք է վկայէք առաջնորդարանիս աշխատանքներուն, ձեռք բերուած նուաճումներուն ու յաջողութիւններուն մասին»:

Հրաժեշտի յուզումնալից իր խօսքին մէջ, Ազգային Վարչութեան շրջանաւարտ ատենապետ՝ Յակոբ Խաչատուրեան շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, հոգեւորականաց դասուն, պատկառելի ժողովիս, իրեն վստահուած պատասխանատու պաշտօնին համար, ու պատրաստակամութիւն յայտնեց ամէն ձեւով շարունակելու իր ծառայութիւնը:

Բարձր գնահատելով Յակոբ Խաչատուրեանի եկեղեցանուէր ու ազգանուէր ծառայութիւնը, Առաջնորդ Սրբազան Հայրը խորհրդանշական նուէր մը յանձնեց անոր:

Յանուն Ֆիլատելֆիոյ (Փենսիլվանիա) Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական եկեղեցւոյ հովիւին ու համայնքին, սոյն եկեղեցւոյ երեսփոխան Ստեփան Սելվէրեան 2011 թուի Ազգային Երեսփոխանական Ժողովը Ֆիլատելֆիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական եկեղեցւոյ մէջ հիւրընկալելու հրաւեր կարգաց:

Այնուհետեւ, Սուրբ Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ «Հրաշափառ» ի արարողութիւն, որու ընթացքին վերընտիր Առաջնորդ Հայրը իր խօսքը ուղղելով ներկաներուն, ի միջի այլոց ըսաւ. – «Սիրելի հոգեւոր եղբայրներ եւ սիրելի հարագատներ, երբ այս եկեղեցիէն ներս մտայ որպէս վերընտիր առաջնորդ, առաջին զգացումը որ ունեցայ փառաբանութեան զգացումն էր ուղղուած Աստուծոյ: Աստուծոյ փառք: Ինչպէս ես ու հոգեւոր եղբայրներս, դուք ալ պարտք ունիք կատարելիք Աստուծոյ եւ մեր ժողովուրդին նկատմամբ...»: Եւ աւելցուց. – «Մեր օրինակը, կեանքի դասը Քրիստոսն է, ու ինչպէս ինք դրկեց իր աշակերտները, այսօր ալ Հայց. Առաքելական մեր եկեղեցին մեզ կը դրկէ մեր ժողովուրդին: Մեր խօսակցութիւնները հոս չեն վերջանար, եւ պէտք չէ՛ վերջանայ: Ձեր համայնքներու տարած գեկուցումով կապը աւելի կը զօրացնէք համայնքներուն եւ Առաջնորդարանին միջեւ»: Աւարտին տեղի ունեցաւ աջահամբոյր եւ երգուեցաւ «Կիրիկիա» մաղթերգը:

Պատրաստեց՝  
Զարեհ Ա. Քհնյ. Ստեփանեան  
Ատենադպիր Ազգային Երեսփոխանական Ժողովի